

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

13. 06. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերդյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Հ. Մկրտչյանը, Ն. Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
- Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ

Օր ա կ ա ր գ ու մ`

- 1.Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին
/ Ջեկ. Ն.Սարգսյան/
2. Համայնքների սեփական եկամուտների մասին
/Ջեկ.Հ.Պապոյան/
3. ՀՀ Կառավարության կողմից սոցիալապես անապահով ընտանիքներին որպես աջակցություն հատկացված PVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի բաշխման մասին
/Ջեկ. Ս.Համբարյան/
4. 2015թ. պետական ել միջազգային ծրագրերով դպրոցականների ամառային հանգստի անցկացման և 2016թ. նախատեսվող միջոցառումների մասին
/Ջեկ. Մ.Սայադյան.Ն.Սարգսյան/
- 5.Ամառային զրոսկոչի կազմակերպչական աշխատանքների մասին
/ Ջեկ.Ս.Ղուբաթյան/
- 6.Գարնանացանի աշխատանքների ել մարզում ազդուական պարարտանյութի բաշխման մասին
/ Ջեկ. Գ.Հակոբյան/

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բաղդոյանին, Հ. Թադևոսյանին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

ա/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման կիսամյակային պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ, այդ նպատակով մեկշաբաթյա ժամկետում տարածաշրջաններում կազմակերպել արտագնա խորհրդակցություններ:

բ/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել աշխատավարձերի և այլ ֆինանսական պարտավորությունների առաջացումը բացառելու ուղղությամբ, այդ նպատակով անհրաժեշտության դեպքում առաջարկել համայնքներին վերանայելու իրենց բյուջետային բաշխումները:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Սարգսյանին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Խաչատրյանին՝

ԼՂՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարության հետ քննարկել Լոռու մարզում երեխաների ամառային հանգստի կազմակերպման և անցկացման հարցը, ներկայացնել առաջարկություններ:

/Ժամկետ՝ մեկ շաբաթ /

3. Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Սահակյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների ավագանու կողմից ընդունվող որոշումների օրինականության նկատմամբ՝ չհիմնավորված ծախսերը բացառելու նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումների կողմից հեռուստատեսային թվային ընդունիչ սարքերի բաշխման գործընթացի նկատմամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել ազոտական պարարտանյութի բաշխման և գումարների գանձման ու վճարման գործընթացի նկատմամբ և չվճարված գումարների ցանկը տրամադրել նաև մարզպետի տեղակալներին

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/